ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2023 թվականի № 306-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2022 թվականի դեկտեմբերի 30-ի № 478-Ա որոշումը և *Ա. Բաբաջանյանի*՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ի № 28 դիմումն՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Արմենուհի Բաբաջանյանին*** տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2023 թվականի հոկտեմբերի 18-ից 31-ը ներառյալ:

2. ***Արմենուհի Բաբաջանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Լյուդմիգ Հարությունյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Լյուդմիգ Հարությունյանին*** և «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Ռուզաննա Հովհաննիսյանին*** ապահովել «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Ռուզաննա Հովհաննիսյանի)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2023 թվականի հոկտեմբերի 12
ք. Հրազդան